էջմ. № 408 նժ. Նարեկից, որոնք գրուած են այս վանքում և օգտագործել ենք իւր տեղում։ Հաւանական չենք համարում, սակայն, որ ԺԴ. դարի կէսերից մինչև ԺԴ–ի կէսերը արձանագրութիւններով հարուստ մի վանքում, ուր եղել են և առաջնորդ «վարդապետներ, այդքան ամուլ լինէր ձեռագրական արուեստի կողմից։ Ինչպէս էլ լինի, իրողութիւն է, որ վանքի դիրքը ԺԴ. դարի կէսերից յետոյ՝ շատ երկրորդական էր. այս ընդհատումից յետոյ շատ չնչին և կցկտուր մի քանի տեղեկութիւն ունինք միայն այստեղ կեանք լինելու մասին։ Տաճարի արևելեան կողմը ՊԵ (= 1356) թուականից է Սարգիս քահանայի տապանագիրը (Ա. 175). ՋԴ (= 1455) թուից Ամի(ր?) Սարգսի խաչքարն է իւր ծնողների և որդու յիշատակին՝ հարաւային գերեզմանատանը. Խաչատուրի եւ իւր կենակից Արզուքանի յիշատակին է ՌԴ (= 1554) թուականի խաչանիշները տաճարի հիւսիսային պատին ներսից. Շահռամանի խաչքարը տաճարի արևելեան կողմը (Ա. 176, 177, 178)։ Այստեղ է և Մահևանա քահանայի անթուական տապանագիրը. «Քս. ողորմի Մահևանա քահանայի», որ գուցէ ԺԴ. դարից լինի։

Ձեռագրական մի յիշատակարան միայն ունինք այսքան երկար ժամանակի համար. Թանատի վանքի Յովհաննէս կրօնաւորը 1491 թուին գրել է մի ճաշոց Գեղամայ Գաւառ գիւղում(*)։

Ահա մեր բոլոր տեղեկութիւնները վանքի վերջին դարերի կեանքի մասին։

Ե.

ԿՈՒՔԻ ԵՒ ՈԾՈՊԱՅ ՎԱՆՔԵՐԸ

Խաղբակեանց կամ Պոոշեանց տոհմի հոգեւոր կեդրոններից մէկն էլ Կուքի վանքն է, այսպէս կոչուած տեղի անունով, մինչդեռ արձանագրութիւնների և յիշատակարանների մէջ Հաղարարիւրք է յիշւում։ Կուքին գտնւում է համանուն գետակի ակունքների մօտ և համանուն կամ Սանդեաբ լերան ստորոտում, մի գոգաւոր, գեղազարդ անկիւնում։ Պաղատու ծառերի պարտէզները զարդարում են գիւղի միջով անցնող գետակի ափերը, յատկապէս խնձորի, տանձի և դաբաւոր, հաստաբուն ընկուզենիները։ Կլիման սքանչելի եւ առողջարար, որովհետեւ պատսպարուած է Կուքի բարձր սարով հիւսիսային քամիների դէմ։

Վանքը պարսպապատ է քառանկիւնի ձևով. մեծ դարբասի բացուածքը հարաւից, իսկ աւելի փոքր դուռը արեւմուտքից։ Հարաւային դարբասին մօտ, բազի մէջ, աղբիւրի վերան շինուած է մի մատուռ, իսկ բուն եկեղեցին աւելի դէպի հիւսիս, դրսից սըրբատաշ քարով, իսկ ներսից քար ու կրով. պարսպին կից արևմուտքից և հարաւից խցերն էին ընկած։ Եկեղեցին փոքր է, չորս ափսիդներով, որոնց կամարները իրենց ներքևի մասում միացած միմեանց հետ անմիջապէս, հազուագիւտ երևոյթ մեր եկեղեցական ճարտարապետութեան մէջ. արևմտեան կամարով եկեղեցին միանում է գաւթի հետ, դալանաձեւ երեք կամարներով կապուած։ Գաւիթն աւելի ընդարձակ է, քան եկեղեցին, և աւելի ուշ ժամանակի, հաւանօրէն, ԺԷ. դարի։

Վանքը շատ աղքատ է արձանագրութիւններով. հնագոյնը մի խաչքար է 1215 թուի արձանագրութեամբ, այն էլ վանքի սահմաններից բաւական հեռու Ջրաղացի ձորում. երկրորդը 1287 թուականից, որ կանգնել է Պոոշի աւագ որդին՝ Պապաքը իւր ամուսնու կենդանութեան համար (Ցաւել. Ա. 180)։ Երեւի, այս երկրորդ արձանագրութեան հիման վերայ Սմբատեանը(**) վանքի հիմնարկութիւնը կապում է նոյն իշխանի անուան հետ, որ իրական, ապացոյց լինել կարող չէ այդպիսի կարծիքի համար։ Ուրիշ արձանագրութիւն չգտանք վանքի հիմնարկութեան մասին, իսկ նա Պապաքի այս արձանագրութիւնն էլ առանձին չի յիշում։ Վանքի պատերի վերայ միայն մի արձանագրութիւն ունինք 1291 թուից, որով տեղեկանում ենք թէ Վրթանէս և Աղուտ ամուսինները հարիւր դեկան են տուել «ի Ռ։ բիւրքս» և միաբանները երկու ժամ նշանակել (Ցաւել. Ա. 181). իսկ արևմտեան պատին մէջ հաստատուած է մի փոքրիկ, գեղեցիկ և նրբաքանդակ խաչ, որի մի կողմից գրուած է «Թվ. Ջ։ Ա. Ե.», իսկ միւս կողմից՝ «Ած ողոր-

(*) Քաջբերունի, Արարատ, 1889, եր. 104։
(**) Երնջակ, եր. 485։